## 68. ԽԵՂՃ ՄԱՐԴ

Կէղնի չէղնի խեղճ տղե մի կէղնի։ Կէլնի կէրթա կուրբաթ, օտար էրկիր մի կմտնի։

Կասա. «Երանի էսօր ես օսկիմ՝ փարա գտնի»։

Կէրթա կպտռտվի, աստծու հրամանքով օսկի մի փարա կըգտնի։ Կէրթա կահվեն, կնստի ցածր դռան ետև։ Կասա.—Կահվաջի, կահվե մի շինա, պե ընձի խմեմ։

Կահվաջին կէրթա կասա.—Տղա՛, տղա՛, կնա ստաքներու տրկներ օղողա՛, լից տեղ մի, տար տուր թող խմա։

Տղեն քնաց, էն տեսակ էրեց, պերեց, տրեց խեղճ մարթու հ՝առեճ։ Մարթ վերցուց էտ կահվեն խմեց։ Հանեց օսկի մի փարա թալեց մասի վերեն, հ՝ելավ քնաց։

Կահվաջին ասաց աշկերտին.—Տղա՛, քնա տես էն ի՞նչ էր էն մարթ թալեց մասի վերեն, հ՝ելավ քնաց։

Աշկերտ քնաց, տեսավ օր օսկի մի թալուկ մասի վերեն, վերցուց առավ էկավ, ասաց կահվաջուն.—Օսկի մի փարա թալեր էր։

Կահվաջին օսկին ծեռքն առավ, զարմացավ, ասաց.—Տղա՛, էս ի՞նչ բան է։ Էս խեղճ մարթ քա, կահվե մի խմա, օսկի մի փարա թալե, հ՝ելնի էրթա՞։

Մնաց դավըրսի[1] օր խեղճ տղեն գենա քնաց օսկի մի փարա գտավ, քնաց էտ կահվեն։

Կահվաջին էտ մարթու ծեռ պռնեց, տարավ վերին քլոխ նստեցուց, մասեն հ՝առճև տարավ տրեց, քնաց լավ կահվե մի շինեց,

---

1 Հաջորդ (օրը) (Ս. Բ.)։

պերեց տրեց էտ մարթու հ՚առեճ։ Մարթ վերցուց կահվեն ծեռք, խմեց փրծավ, հանեց օսկիմ էլ թալեց։

Կահվաչին օր օսկին տեսավ, մարթու մոտեն հացուց, ասաց.— Կխնդրեմ, ախպեր, տուն ի՞նչ մարթ ես, ընձի ըսե։

Խեղճ մարթն էլ ասաց.— Ինչի՞տ է պետր, եթե քու փարեն պա-կ·աս է, ասա, է՛լ տամ։

Կահվաչին ասաց.—Փարեն պակաս չէ։ Ես մինակ կզարմանամ, օր որչափ մեծ մարթ մի քա էսա տեղ՝ շա՜տ ջա՜տ պիտի տա հինգ ղուրուշ փարա, պիտի հ՚ելնի էրթա։ Տո՛ւն, էղավ էրկու անքամ կու-քաս էստեղ, մեկ կահվա կխմես, մեկ օսկի կթալես, էտոր համար ա կհարցնեմ, թե տյու ի՞նչ մարթ ես։

Մարթ զինան[1] ասաց.—Չեմ ասե, ինչո՞ւտ պետք։

Սորա[2] կահվաչին շատ աղաճեց, խեղճ մարթ ասաց.—Իշթա ես ֆլան թաքավորի տղեն եմ, թաֆթիշ[3] դեյինդա[4] էկեր եմ էստեղ պտռտվելու, կտառնամ, կէրթամ։ Հիմա, տուն վաղ ընձի համար լավ ծեռք մի շոր կառնես, ու ամեն տեսակ կերակուր, էս էրկուք մեկտեղ կտնես սինու մեջ, սահաթ խընգին կպերես այսինչ պաղ-նիք, ես կէրթամ պաղնիք, կլողկնամ, պաղնիքեն կելնեմ, շորերս կհաքնեմ, քու իրավունք ինչ օր ա՝ զէն կուտամ։

Կահվաչին հ՚ելավ խեղճ մարթու ասածին պես էրեց, առավ քնաց պաղնիս, հարցուց պաղնեպնի մոտեն.

— Էստեղ ուրիշ օտար մարթ չէկե՞ր է։

Պաղնեպան կասա.—Չէ՛ ուրիշ օտար մարթ չէկեր է։ Մինակ խեղճ մարթ մ՚էկավ, մտավ ներս, մենք չթողինք, սորա էտ մարթ էրես շատ լռտեց, մենք պարկացանք էտ մարթու վերեն, քանիմ՝ ճլոտ էլ ա զարկեցինք, թալկեցինք ներս, քնաց նստավ տռան եռև, մռտառ ճրերով կլվացվի։

Պաղնեպան էս պան օր պատմեց կահվաչուն, կահվաչին քլոխ տարավ պերեց, պարկացավ, ասաց.—Մարթ, ծո՞ւռ ես, ի՞նչ ես էրեր ես էս մարթու քլոխ, օր տուք էսչափ պան եք էրեր եք, տուք չգի-տեք էս մարթ ի՞նչ մարթ է, կամ վի՞ր տղեն է։

Պաղնեպան տարցավ ասաց.—Էսի վի՞ր տղեն է, կխնթրեմ օր ասես։

---

1 Նորից, կրկին (Ծ. Բ.)։
2 Հետո (Ծ. Բ.)։
3 Դիտել, զննել (Ծ. Բ.)։
4 Իբր, իբրև թե (Ծ. Բ.)։

Կահվաչին տարցավ ասաց.—Աստված քու տուն ավիրա, էս մարթ, ֆլան թաքավորի տղեն ա։ Թավթիշ դեյինդա էկեր է էստեղ պտոտվելու, կտառնա էրթա։ Էս էղավ էրկու օր կուքա իմ կահվեն, մեկ կահվա կխմա, մեկ օսկի փարա կթալա։ Հիմա լա էտոր խամար ծեռք մի շոր պերեր եմ ու կերակուր։ Հիմա օր պաղնիսեն տուս հ'ելավ, քնաց լուր տվեց ուր խոր, քու քլոխ ի՞նչ պիտի էնե։ Խոքո՞վ, մարմնով պիտի քեզի կորսընցնե։

Պաղնեպան տարցավ ասաց.—Մարթ, կխնթրեմ քեղմե, տուն օր ընձի էս մարթու ծեռքեն չաղատես՝ ուրիշ մարթ չըկրնար։

Կահվաչին ասաց.—Կա՛նիր, հ'ելի տեսնինք, տուք օր էն պան խաղցեր եք էտ մարթու քլոխ, կարելի՞ է էտ խոսք մոռնա։

Մնացին քիչ մի, պաղնեպան հրաման էրեց ուր նաթըրներուն.—Քացեք պաղնիք, լավ մի մաքրեք քետին, յորղան դոշակ տարեք թալեք, էտ մարթ տարեք վրան դրեք, լավ մի կմաքրեք, դուս կհանեք։

Նաթըրներ քացին, էն տեսակ էրեցին։ Պաղնեպան էլ քնաց հ'օդեն լավ մի սարքեց։ Էդ մարթ լվացին, դուրս հանեցին, պերին նստուցին հ'օդեն, կահվա, չայ շինեցին, տրին էտ մարթու հ'առեճ, մարթ վերցուց խմեց։ Էնդից վերճ առավ ջորեր ուր ծեռք, կահվաչին օր պերեր էր, խաքավ։ Պերեց կերակուր իր հ'առեճ, կերավ։

Էտ մարթ կահվաչուն ասաց.— Քու իրավունք ի՞նչ է, ասա տամ։

Կահվաչին ասաց.—Տաս օսկի է։

Էնտեղ քիչ մի համբերեց, սկսավ կահվաչու հետ խոսիլ.—Էլ հ'ուրիշ ի՞նչ պան կա, զրուցե, տեսնամ։

Կահվաչին ասաց.—Ուրիշ պան չունիմ զրուցելու, մինակ հիմա պա՛ մի հասկցու քու վրավով, թե տուն էկեր ես, մտեր ես պաղնիք, պաղնեպան քեզի չը թորկեր ա ներս մտնիս, տուն ալ էրեստի շատ ես լռտեր ես, քիչ մի լա քեզի ծեծած են, սորա թորկած են քացեր ես մտեր ես ներս։ Հիմա լա էտ մարթիկ հասկցած են թե տուն որուն տղան ես, փոշմնված են ուրենց էրած, չքիտեն ի՞նչ տեսակ էնեն, քու սիրտ քրավեն։ Էս պան օր էրած են, սխալմամփ էրած են։ Հիմա կխնթրվին քեզնե, ներես էս քործ։

Մարթն ասաց.—Անկարելի քործ է, կեցիր ես հ'ելնիմ դուրս, տես ի՞նչ պիտի խաղամ էսոնց քլոխ։

Կահվաչին տարցավ, քնաց պաղնեպանի մոտ, ասաց.—Պաղնեպա՛ն, թաքավորի տղեն էս տեսակ կզրուցա, ի՞նչ կասես, յախոտ իմա՞լ կէնես։

Պաղնեպան ասաց.—Ի՞նչ պիտի էնեմ, իմ ծեռք ի՞նչ ճար կա։ Եթե ճար մի քանիս, տո՛ւն պիտի էղիս։

Կահվաջին ասաց.—Ի՞նչ ճար պիտի էղի, հիմա փարայի էլ մխթաջ[1] չէ, օր փարա էլ տանք, սիրտ քրավենք։

Պաղնեպան ասաց.—Կխնդրեմ էս քորթ յոլա տար։ Առ էսա հինդ հարուր օսկին, տա՛ր տուր էտ մարթուն։ Ասա՝ «Կխնդրեմ քեզմե էս պան քեզի իպրև նվեր մի ճամփեր ա պաղնեպան, չէնե ասես թե ես փարայի կարոտութեն ունեմ, իպրև նվեր մի ճամփեր ա, թե էս մարթու հանցանք ներես»։

Էտ մարթ տարցավ ասաց.—Կահվաջի՛, եթե տուն չէղնիս՝ անկարելի քորթ է էս պան, քնա, տվեցի քու խաթըր։

Հ'ելան ինքն ու կահվաջին մեկտեղ քնացին տուն։ Քանի մի օրեն վերճ, ձեն հ'ընդավ էտ տեղաց թաքավորի ականջ։ Ասաց.—Ժողվեցեք մաջլիս, թե քանի օր էղավ ֆլան թաքավորի տղեն էկեր է էստեղ, մենք խաբար չունինք, տուք ի՞նչ կրար[2] կքաջեք էս մարթու վրայով։ Պետք չէ՞, օր էս մարթ մեր տուն հրավիրենք։

Մաջլիս ասաց.—Պե՛տք է։

Հ'ելան, քնացին էտ մարթ կանչեցին իրենց տուն։ Խեղճ մարթ հ'ելավ քնաց թաքավորի սարեն մտավ։ Պարև տվեց, պարև առավ։ Աթոռ թալեցին, էտ մարթ վրեն նստուցին, սկսան զրուցել։

Քանիմ՝ օր մնաց էտպես իրենց տուն, թաքավորն հ'ելավ ուր մաջլըսին ասաց.—Այ մարթիկ, էս մարթ էկեր է մեր տուն, ի՞նչ պետք է հ'ելնինք էս մարթուն ընձա տանք։ Փարա տամ, քիտեմ, թե փարայի կարոտութեն չունի, թաքավորի զավակ է։ Ախչիկ մ'ունիմ՝ պետք ա փսակեմ էս մարթու վրա։

Մաջլիսն ըսավ թե.—Ճի՛շտ է, էտ տեսակ պիտի էնես։

Թաքավորն էկավ, տղային ասաց.—Հիմա տուն էկեր ես մեր տուն, ես քեզի ընձի պիտի էնեմ փեսա, իմ ախչիկ տամ քեզի։

Տղեն տարցավ ասաց.—Չէ, ջանըմ, պետք չէ։

Թաքավոր ասաց.—Անկարելի քորթ է, պետք է էս պան էղնի։

Թաքավոր ախչիկ փսակեց էտ տղայի վրան, սկսավ հարսնիք էնել։

Էտ հարսնիքի մեջ էրկու հատ դավրեշ կհասկնան հարսնիքի ծեն, կելնին կուքան թաքավորի առան հ'առեճ կայնին, կսկսին դյուֆ զանիլ։

---

1 Կարոտ, կարիք (Ծ. Բ.)։

2 Կարծիք, միտք, տրամադրություն (Ծ. Բ.)։

Դավրեշներ կհարցնեն ուրիշ մարթեկաց մոտեն, թե էսի վի՞ր հարսնիքն ա։

Էտ մարթիկ ասեցին.—Չեմ քիտե թե ինչ թաքավորի տղա էկեր է էստեղ, մեր թաքավոր հասկցավ, պերեց ուր տուն, ուր ախչիկ տվեց էս մարթուն։ Հիմա լե էս մարթու հարսնիքն ա։

Դավրեշներ դյուֆ ղանելու մեջտեղ թաքավոր իճավ ցած, քընաց ուր սարից, տեսավ օր դավրեշներ կանած դյուֆ կղանեն, հանեց էրկու իրեք օսկի տվեց պախշիշ, թաքավոր թողեց հ'ելավ վեր։ Սորա փեսեն իճավ ցածր, ծեռ տարավ ջեր, լըփ մի օսկի հանեց լցեց դրֆի մեջ։ Դավրեշներ շա՜տ ուրախցան, թողին քիչ մի տեղ քնացին։

Մեկ հ'ընգեր մեկին ասաց.—Տղա, էսի թաքավոր իճավ իրեք օսկի փարա տվեց, ուր փեսեն էկավ լըփ մի օսկի տվեց, էս ի՞նչ փան էր, ես զարմացա։ Հիմա, էս մարթ օր լըփ մի օսկի տվեց, եթե էրթանք ուր խոր մուժդա տանք, հրպա էնի՞ ինչ չափ պիտի տա մեզի։ Ինչ չափ չէղնի՝ էրկու իր տղայի վերեն ավելի կուտա։

Դարվեշներ հ'ընգան ճամփա ու քնացին դյուրան իր խոր տուն։

Էտ տղեն ու ախչիկ երփ քիշեր կմեկտեղին, տղեն ախչկան կասա.—Տեսա՞ր քեզի ինչպես էրկու օսկով առա։

Ախչիկ տղին կասա.—Ինչպե՞ս էրկու օսկի, էտ ի՞նչ պան ա դու կխոսիս, մանգար տու թաքավորի աղա չի՞ր, ըսել կուզա տուն խեղճ մարթ ես էղեր ես։

Տղան թարցավ ասաց.—Զէն ու զէն չեմ քիտեր, հ'երկան չեմ կրնար պատմել, մինակ էնքան քիտեմ, օր էրկու օսկով քեզի առա։

Էս խոսաց մեջտեղ ախչիկ կտրատմի, կմնա մինչև լուսուն։ Ախչիկ կելնի կէրթա իր խոր կասա.—Ապո՜, տուն քնացիր էկար, մարթ կըտրեր էր աշխրքի էրես, տանիս խեղճ մարթու մի զիս իտաս։

Խեր տարցավ ասաց.—Ախչի, ի՞նչ ա կխոսաս, տուն ծռե՞ր ես։

Ախչիկ ասաց.—Էս մարթ ընձի քիշերս փան պատմեց, ասաց՝ «Ես քեզի էրկու օսկով եմ առեր եմ». եթե խեղճ մարթ չէղնի, հ'որի՞ն էս պան կասեր։

Թաքավոր էս խոսք օր հասկրցավ, սկսավ մտածել։ Մաջլըսին կանչեց, էս խոսք մաջլըսին պատմեց.—Էս իմ փեսեն ախչկես ի էս տեսակ խոսք մե ասեր է։ Կարելի՞ ա, օր էսի խեղճ մարթ է ֆոնդաղ մ'էրեց մեր քլոխ։

Մաջլիս ասաց, թի, շատ կարելի ա, եթե չէղնի՝ էս խոսք չասեր։ Թաքավորն ասաց.— Եթե էտպես ա, պերեք էտոր քլուխ զանենք։

Մեկն ասաց.—Խա՛։

Մեկն ասաց.—Չէ՛։

Վերճեն չվնասեցին, ասաց.— Թողե՛ք, թըխ էրթա, տեսինք վերճ ի՛նչ կէղի։

Տղի բովն էլա պավականին փարա կա։ Տղեն քնաց, քաղքեն տուս հ՝ելավ, ճամփուն վերեն նստավ, քիչ մի մնաց էտտեղ, տեսավ ճոչ քարվանմ՝ էկավ։ Տղեն հ՝ելավ քնաց բաղրկնի մոտ, ասաց.—Բաղրկան բաշի, էս քու քարվան ի՞նչ քարվան է։

Բաղրկան ասաց.—Ապրրշում ու թանդաքին սաներն է։

Մարթն հարցուց.—Ծախո՞ւ է, թե չէ։

Ասաց.—Ծախու է։

Մարթն ասաց.—Մաղամ օր ծախու է, արի տուր ընձի, ես քեզի ի՞նչ տեսակ օր հրաման կէնեմ, տուն էլ տանիս, իմ ասածի պես էնես։

Բաղառ էրեց բաղրկնի հետ, ապրանքներ առավ, ասաց.—Կը տանիս էս ապրանքներ ֆլան թաքավորի տռան հ՝առեճ կտառտրկես, քեզմե օր հարցուցին ասին՝ «էս ի՞նչ ապրանք է», տուն կասես թի՝ «Այսինչ թաքավորի տղեն օր էկեր էր էստեղ, տուն պերեր ես, էրեր ես քեզի փեսա, էտ տղայի խեր օր հասկցավ էս փան, հ՝ելավ բեզի էս ապրանքներ ընծա ճամփեց»։

Հ՝ելան քնացին, թաքավորին պատմեցին.—Թաքավոր ապրած, քարվա մի ապրանք բաղրկան պերեր է մեր տռան հ՝առեճ լցեր է, կասա թի քու փեսի հերն է ճամփեր է։

Թաքավոր էս խոսք օր հասկցավ, շատ զարմացավ, ասաց.—Դե, քնացեք, էն բաղրկան կանչեք պերեք էստեղ։

Իճան, քնացին բաղրկնին կանչեցին, պերեցին, թաքավոր հարցուց.—Բաղրկան բաշի՛, էս ի՞նչ ապրանք է։

Ասաց.—Թաքավոր ապրած, չէ՞ տուն այսինչ թաքավորի տղեն պերեր ես քու մոտ, ախչիկտ տվեր ես էս մարթուն, էրեր ես քեզի փեսա, էտոր խերն էլա էտա պան օր խասկցավ, հ՝ելավ քեզի նվեր ճամփեց։

Թաքավոր էս պանի վրա քլուխ տարավ պերեց, սկսավ մտածմունքի մեջ հ՝ընզնել, ինքն իրեն ասաց թե՝ «էս ի՞նչ պան էր ես էրեցի»։

Ախչիկ կանչել պերել տվեց.—Ջսվա՛կս, տու էս ի՛նչ պան էր խաղցար մեր քլուխ։ Էսի թաքավորի տղա էր, տուն ըսեցիր թաքավորի տղա չէ, խեր խասկցեր ա, հ՝ելեր ա, էսքան ապրանք ա ճամփեր ա մեզի նվեր։

Էնդից վերճ թաքավորն էկավ խաղար հատ ձիավոր ճամփեց չորս կողմ, թե.—Էս իմ փեսեն որտեղ օր գտաք՝ պռնեք, առիք, գաք։

Ծիավորներ քնացին էտ մարթ քտան, առան էկան։ Թաղդան պերեց յոթն օր, յոթ քըշեր խարսնիս էրեց։

Մնաց մեկ էրկու օր սորա, էտ դավրեշներ օր քնացեր են, տղի հոր պատմած են.—Քու տղեն այսինչ թաքավոր տարեր է, էրեր է իրեն փեսա։ Մենք քնացինք ուր հարսնիք շնորհավորեցինք, մեղի պավականի չափ էլա փարա պախշիշ տվեց, մենք էլա, հ'ելանք, էկանք քեղի մուժդա կուտանք։

Թաքավոր էս խոսաց վերեն, սկսավ ինքն ուրան մտածել, թե՝ «Ճանրմ, էսի ընձի տղա չկա, կարելի ա թե աստված ընձի տղե մի կխասցուցա»։

Թաքավոր պավականի չափ փարա դավրեշներուն տվեց, դավրեշներ թողին քացին։ Բայց թաքավոր քնաց նստավ թելկոաֆի գլոխ, թել մի տվեց ուղակի իր տղի աներոջ թե՝ «Շուտով հ'առեճ իմ տղայի պատրաստութեն տեսնիս, ճամփես իմ քով։ Շատ շնորհակալություն կհայտնենք»։

Տղայի աներ, երփ թելկոաֆ առավ, կրկին անքամ ուր տեղ զարմացավ թե՝ «Էրթալով կհաստատվի էս պան»։

Ան էլ հ'ելավ թելի պատասխան ճամփեց թե՝ «Այսինչ օր անպատճառ կճամփեմ քա»։

Թաքավոր իր փեսեն ու իր ախլիկ հ'ելավ ճամփեց, պավականի չափ օսկի ու ապրանք էլ հետ։

Տղեն քնաց իր հոր քաղքին մոտեցավ, տղեն թել տվավ ուր հոր թե՝ «Պատրաստ մնացեք՝ ես էկա»։

Թաքավոր հ'ելավ թաբուր մի ասքար ճամփեց իր տղայի հ'առճև սալամլուխ։

Տղեն էկավ քաղքի քլոխ իճավ, մեկալ ջույար էրեցին տղին թե՝ «Քու հայրի կողմանեն տու ողջ մնաս, մեռավ»։

Տղեն քիչ մի տռտմավ, շատ մի ուրախցավ։

Տարան տղեն արեցին իր հոր աթոռք։ Մաչլիս կրար քաշեց թե.—Տուն քու հոր տեղ թաքավոր պիտի էղնիս, ժողովուրթ կառավարես։

Էն խասավ իր սուտի մուրադին, տուք էլա ձեր մուրադին։